



Հաստատված է

ԳՊՀ գիտական խորհրդի

2020թ. հունվարի 23-ի թիվ 1 նիստում

Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան

«23» հունվար 2020թ.

ԿԱՐԳ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (փոփոխություններով)

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը սահմանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) ուսանողներին անվանական կրթաթոշակների նշանակման, հատկացման, ինչպես նաև ուսանողներին օգնության տրամադրման կարգը և պայմանները:

1.2. Կարգը սահմանվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ կետի, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի «ՀՀ բուհերում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգի մասին» թիվ 1183-Ն որոշման և ԳՊՀ կանոնադրության պահանջների հիման վրա:

1.3. ԳՊՀ-ն իրավասու է հնարավորության դեպքում սեփական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանել ներբուհական կրթաթոշակներ (այդ թվում՝ անվանական), ինչպես նաև ուսանողին կամ ուսանողների խմբին տրամադրել ֆինանսական կամ այլ օգնություն:

2. Անվանական կրթաթոշակի նշանակման և հատկացման կարգը

2.1. Անվանական կրթաթոշակը ուսանողին հատկացվող ֆինանսական խրախուսանք է:

2.2. Անվանական կրթաթոշակ կարող է տրվել անընդմեջ բարձր առաջադիմություն ցուցաբերած, բուհական և հանրապետական ուսանողական գիտաժողովներին մասնակցած, գիտահետազոտական աշխատանքներ կատարած, հասարակական ակտիվություն և ԳՊՀ ներքին կանոններին համապատասխանող պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին:

2.3. Ուսանողների ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են՝

- ա) մասնակցությունը ֆակուլտետի և ԳՊՀ ուսանողական, հասարակական աշխատանքներին,

բ) զեկուցումների ներկայացում, հրատարակած հոդվածների առկայություն (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում),

գ) մասնակցությունը միջբուհական, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական այլ աշխատանքներին,

դ) մասնակցությունն այլ հասարակական, կամավորական նախաձեռնություններին:

2.4. ԳՊՀ ուսանողներին անվանական կրթաթոշակներ հատկացնելու համար ԳՊՀ ռեկտորը ստեղծում է հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում են՝

ա) պրոռեկտորները,

բ) ակադեմիական քաղաքականության բաժնի վարիչը,

գ) ֆակուլտետների դեկանները,

դ) ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահը,

ե) ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահը:

2.6. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում և ստորագրվում են հանձնաժողովի նախագահի՝ ԳՊՀ ռեկտորի և քարտուղարի կողմից:

3. Ուսանողներին օգնություն տրամադրման կարգը

3.1. Որպես խրախուսման միջոց ԳՊՀ ուսանողին (ուսանողների խմբին) կարող է տրամադրվել նյութական օգնություն:

3.2. ԳՊՀ ուսանողին (ուսանողների խմբին) կարող է տրվել ինչպես ֆինանսական, այնպես էլ այլ բնույթի օգնություններ:

3.3. ԳՊՀ ուսանողներին ֆինանսական կամ այլ օգնության տրամադրման հարցը քննարկվում է ԳՊՀ ռեկտորատի նիստում:

3.4. "ԳՊՀ լավագույն ուսանող" տարեկան մրցանակի արժանացած ուսանողի նկատմամբ կարող է կիրառվել ուսման վարձի զեղչ:

3.5. "ԳՊՀ լավագույն կուրս" տարեկան մրցանակի արժանացած կուրսը կարող է խրախուսվել՝ ֆինանսական կամ այլ օգնության, էքսկուրսիայի կազմակերպման և այլ ձևերով: